

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Որքան էլ խղճուկ է մեր հասարակական կեանքը, բայց և այնպէս, առանց ակնոցի էլ, կեանքի երևութներով զբաղւողը գիտէ իւր վիշատակաւորանք մտցնել նորանոր տողեր, որոնք անհերքելի կերպով վկայում են մեր բնաւորութեան կենդանութիւնը, հասարակութեան ճիգը՝ ապացուցել իւր գոյութիւնը և խօսել տալ իւր մասին: Առիթներ, որոնցից կարող է հասարակութիւնը օգուտ քաղել իւր միտքը ու բաղձանքները լայտնելու, երևան հանելու իւր հոգեկան տրամադրութիւնը, սխալ թէ ուղիղ հասկացողութիւնը՝ արդարև շատ են: Ընդհանրութիւնը ըմբռնող լուզմունքները շատ և շատ սակաւ են խաղում մեր երակներում. բայց զանազան շրջաններում կատարւում են բաներ, որոնց համար հետաքրքրութիւն է նշմարւում կատարող շրջաններից դուրս: Իսկ այդ արդէն բաւական է, որ քրօնիկեօրը նրանց իւր համար նիւթ դարձնէ:

Տեսէք, ինչպիսի լուզմունքներ առաջացրեց Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը, կամ աւելի լաւն ասած, ժողովները, որովհետև այդպիսի «մեծ» գործերի համար հարկաւորւեցին երեք նիստ, փոխանակ մէկի կամ շատ շատ՝ երկուսի. Եւ դեռ սպառնում էլ են մի չորրորդ անգամ ժողով կալացնել՝ լաւ և վատ ճառեր կարդալու համար:

Մի բան, որ ամենեւին չի հեռանում սրտիս վրայից, այդ այն խղճաւոր տպաւորութիւնն է, որ արեցին ինձ վերաջ այդ ժողովները: Ես այստեղ առաջին անգամն էի տեսնում ական լանդիման, թէ հրապիսի ճեղ մտածմունքների մթնոլորտի մէջ է սնւում հալ գրական դասակարգի մի ստաւադոն մասը, թէ ինչպէս նա նմանում է աւազանի մէջ պահւած ձկան, որը ոչ մեծ դետեր է տեսել և ոչ ծովերի ալիքների մէջ խաղացել: Եւ այդ ձուկը խփում էր իւր պոչով այնպէս, որպէս թէ ովկիանոսի ջրերի մէջ լինէր: Եւ ի հարկէ, նա միշտ խփում էր պատերին... Այդ բոլորը տխուր տպաւորութիւն արաւ վերաս, մտածելով, որ այդ երկաթասարդները այսօր լքցնում են լրագիրների էջերը իրանց «մտածողութիւններով» և դոցանով կերակրում՝ ով կալ ընթերցող մեր մէջ: Ես նրանց տալիս եմ հա-

մոզած մարդկանց անունը: Յիշում եմ, թէ ինչպէս մի խնճողքում, ուր հաւաքած էին պատանի օրիորդներ, նոցանից մէկին վիճակւած էր «դահիրէ» (զափ) ածելը: Բայց ալդ պաշտօնը օրիորդը արն աստիճանի լրջութեամբ էր կատարում, որ, կարծես, վարձւած լինէր դրա համար: Նա ոչ ոքի վերաջէր նալում, ալ մի առանձին, միմիայն ուստաներին չատուկ կերպով բռնած էր դահիրէն, գլուխը մի առանձին կերպով ծռած դէպի դահիրձի անկիւնը, աչքերից ցալտում պատասխանատուութեան զգացմունքը—նա ածում էր իւր դահիրէն... Նորան անւանեցին «համոզւած» օրիորդ: Եւ էլ մեր հասարակական «դահիրա» ածողներից շատերին անւանում եմ «համոզածներ»: Իսպանացին նրանց կ'անւանէր «Դօն Կիխօտ»-ներ: Եւ Դօն Կիխօտը շատ «համոզւած» մարդկանցից էր, որպէս էր նաև Էրկման-Շատրեանի հերոսներից մէկը՝ «հռչակաւոր զօքսօր Մաթէոս» և նորա ուղեկից Կուկու Պետր'ը:

Երկար և խորը քնից ոտքի է կանգնեցնում Հրատարակչական Ընկերութիւնը, հին անգործ կառավարիչների տեղը ընտրւում են նորերը,— և արդէն առաջին իսկ Նիստից Ընկերութեան անդամները, որոշ խումբերի բաժանւած, մէկը միւսին խարդախութեան մէջ է մտնողում՝ առանց մի ակնկալունի ապացոյցի: Որ հասարակական ժողովներին անսովոր մարդկանցից սպասելի չեն ըստ ամենակնի կարգին ժողովներ—ալդ հասկանալի է: Բայց մեր գանգատը ամենևին արն չէ, թէ ինչո՞ւ Հրատարակչական Ընկերութեան նորեկ ժողովները արնքան էլ կարգին չէին. մարդիկ են, կը սովորեն, կը կրթւեն: Բայց մեզ խորը ցաւ պատճառողը սա է, որ ալդ տիպոր իշխատակներ թողնողները արն մարդիկն են, որոնք հրապարակաստութեան գրիչը տարիներով ձեռքում ունին բռնած: Անհեթեթութիւնները և տղեղութիւնները իսկոյն երևում են ժողովներում: Այստեղ կալ անմիջական ընդդիմախօսութիւն, կալ կարգապահ—նախադահ, և լաւն ու վատը, կանոնաւորը և անկանոնը իսկոյն ցոյց են տրւում և հանդիսականները ալդ բոլորը նկատում են: Ալ լաւն է մամուլը, որտեղ կատարւում է նոյնը, ինչ որ լինում է ժողովներում, և արդէն աւելի սանձարձակ կերպով, բայց... ընդդիմախօսութիւնը անմիջական չէ, դատաւորները—ցրւած, նախադահութեան աթոռ—պարապ: Սուտ խօսողը չի կարմրում, որովհետև իսկոյն ևեթ նորա սուտը չի երևում, խարդախութիւնը աւելի ևս միծ ասպարէզ ունի, քան սուտը, որովհետև խարդախութեան մէջ դեր է խաղում հո՞ւն արը, արևստը, որը փակ է մնում ընթերցողի առջև: Նախանձը և չարակամութիւնը մնում է շատերի համար անթափանցելի: Ժողովներում թիւրիմացութիւնները իսկոյն ևեթ ջոկւում են, և վերջապէս քւէարկութիւններով դատաստան է կատարւում չափնած կարծիքների մասին: Իսկ մամուլի մէջ... արի ու սպասիր, թէ հասարակութիւնը պէտք է դատէ:

Անցեալ մայիս ամսին երեք եկեղեցիների ծխականների պատգամաւորները հաւաքել էին Յովնանեան-Մարիամեան Յորիորդաց զպրոցի հոգաբարձական ընտրութիւն կատարելու համար, Հոգաբարձական ընտրութիւնները մեղանում սովորական են. բայց փշեալ զպրոցի համար, որը արդէն 15 տարի է գոյութիւն ունի, դա՛ մի արտասովոր բան էր: Հանգուցեալ Ստեփան Յովնանեանցը, լո՛ւսաբերով իւր խորհրդատուների թախանձանքներին, հիմնել էր ալդ զպրոցը և նորա վերալ խնամակալներ էր նշանակել իւր եղբորը՝ պ. Ալեքսանդր Յովնանեանցին, փեսային՝ պ. Միքայէլ Շահ-Պարոնեանցին և իւր աղբական պ. Յովհաննէս Խատիսեանցին: Ալդ խնամակալութիւնը պէտք է մնար անփոփոխ մինչ զպրոցի հիմնադրի մահը: Բայց ահա վախճանում է հիմնադիրը անցեալ տարի և, զպրոցի Բարձրագոյն հաստատած կանոնադրութեան համաձայն, կատարում են հոգաբարձական ընտրութիւններ երեք եկեղեցիների պատգամաւորներից, որոնց, վերջիներեւ, ընտրում են բոլոր ծխականները:

Ահա ձեզ իրաւունք. ժողովուրդը, պատգամաւորների միջոցով, ընտրում է զպրոցի հոգաբարձուներին:

Բայց եթէ աշխարհումս միմիայն իրաւունքը չարգէր... Դէ, ալն ժամանակ ամեն պարտականութիւն կատարած կը լինէր՝ իրաւունքը բանեցնելով: Բայց ո՛չ. իրաւունք է արւած ընտրել, փոփոխել, որպէս կամենում է ժողովուրդը. բայց կանոնադրութիւնը չէ պարտաւորեցնում անպատճառ փոփոխել եղածը, երբ ալդ եղածից դժգոհ լինելու պատճառ չի եղած: Արդ, մինչ ալժմ Յովնանեան-Մարիամեան զպրոցը գործել է աճպէս, որպէս միայն մի բարեկարգ զպրոցից պահանջել կարելի է: Մի ալնպիսի ժամանակ, երբ մեր զպրոցական հոգաբարձութիւնների վերալ ընդհանուր գանգառ կալ և սաստիկ տրտունջ և մինչև անգամ բողոքներ, մի ալնպիսի ժամանակ, երբ զպրոցական հոգաբարձութեան իրաւունքների ի չար գործադրութիւնը, ալդ հաստատութեան իրաւունքների սահմանափակումը հերթական խնդիրների շարքն է դրած,—մի ալնպիսի ժամանակ, ասում եմ, ուշադրութեան չ'առնելը Յովնանեան-Մարիամեան զպրոցի մինչև ալժմ եղած խնամակալների կամ հոգաբարձուների խոհեմ գործունէութիւնը—բարոյական անիրաւութիւն է: Պատգամաւորները քւէարկութեամբ ընտրում են նախկին հոգաբարձուներից միայն երկուսին, ալն էլ միայն մէկին միաձայն, իսկ երկրորդին՝ ձայների բաղմութեամբ, մինչդեռ երրորդին սկսեցնում են: Եւ բանից դուրս է գալիս, որ ալդ երրորդը հէնց ուղիղ նա է, որը ամենամեծ ջանքեր ունի գործ դրած փշեալ զպրոցի համար թէ աշխատելու հանգուցեալ հիմնադրի մօտ և թէ ալդ զպրոցի գոյութիւնը ապահովելու՝ Յովնանեան կէս միլլիօն արժէք ունեցող կարւանսարալի եկամուտները զպրոցին լատկացնելու համար: Հապա ինչպէս չը բացականչել, պարօղիա անելով Շեքսպիրի Կլոյտնի խօսքերին՝ ապերախութիւն, քո ան ունն է մա՛րդ:

Մի ժամանակ, երբ ով միայն կարող է, փախչում էր Պարիզ, մի բուն Պարիզեցի եկաւ Մեզ մօտ հիւր. մեզ մօտ ուզում եմ ասել հայերիս մօտ: Ճիշդ է, միմիայն մի երեկոյի համար: Կա է՝ Ժորժ Օնէ, բայց ի հարկէ ոչ անձամբ, այլ իւր գործքերից մինով: Նորա դրաման՝ «Կարքնոցի պետը», Le maître de forges, որ մալիսին առաջին անգամ ներկայացրին հակա-կան բեմի վրայ Թիֆլիսի հալ թատերասէրները:

Հետաքրքրական հեղինակ է Ժորժ Օնէն և, աւելի քան մի կողմից, հետաքրքրական են նորա պիեսները: Ամեն գրողին չի վիճակում այնքան շուտով տիրանալ հասարակութեան տրամադրութեանը, որքան Օնէն, որը ֆրանսիական նորագոյն գրողներին է և՛ փալուեններից: Համարձակ է իւր դրամական կօմբինացիաների մէջ—մինչ լանդզենութիւն. բայց նորա լանդզենութիւնը միամիտ է, ուղիղ, բաց: Օնէն ունի մղուսն մտքի, որը ուղիղ իւր նպատակին է դիմում և որը զարճութեամբ թուշում է բոլոր խոչընդոտների գլխի վրայից և որը չի էլ կասկածում, թէ մի աւելի խելօքը կը վախենար նոյն տեղերում վիզը կտրել:

Այսպիսի տպաւորութիւն արաւ նորա առաջին դրաման՝ «Աերթ Պա-նին», որը առաջին անգամ ներկայացւեց Պարիզի լաւ թատրոններից մի-նում, Théâtre de Gymnase, 1882 թ. լուսնարին և այդ առաջին անգա-մով ունեցաւ անագին չաջողութիւն: Նոյնը եղաւ, երբ ուղիղ երկու տարի քետոյ, 1884 թ. լուսնարին, նոյն թատրոնում, ներկայացւեց «Կարքնոցի պե-տը»: Նա ողջունեց, որպէս թատրոնական մեծ չաջողութիւն:

Այժմ գրեթէ սովորութիւն է դառել Փրանսիայում, որ հեղի-նակները, նախ քան դրաման գրելը, բօման են գրում, որը վետոյ դարձ-նում են դրամա: Այնպէս որ թատրոնը անցնում է գրականութեան միջով: Որքան էլ որ մի հեղինակ չաջողութիւն է գտնում իւր բօմաններով, աչ-նու ամենայնիւ նա իւր հեղինակալին փառքին հասած չի համարում, մինչ-կ և որ իւր գործը բեմի վրայ չը տեսնէ: Բեմը դառել է փորձաքար բօմա-նի չաջողութեան: Բեմի վրայ աչքը տեսնում է այն, ինչ բօմանում նկարագրւած է. բայց կարդալիս՝ ընթերցողը պէտք է քննադատի ոյժն ունենալ, որ նկատի բոլոր անբնական դիրքերը. բեմի վրայ՝ այդ բոլորը ուղղակի ներկայացուում է. լաւ ու վատը, բնականը և անբնականը, հո-գեբանական ճշդութիւնը, թէ անճշդութիւնը—բեմի վրայ մարդու աչքին են դարձնում, իսկ բօմանի մէջ՝ ոչ նոյն չափով: Ներկայացրէք բեմի վրայ այն, ինչ պատմում էք, տեսնենք որքան միտք ունի ասածդ,—կարծես ասում լինին վիպասաններին:

Այս հալեացքը դրամայի մասին անշուշտ առանց պակասութիւնների չէ, բայց դեռ ևս դէպքը կը բերի մեզ խօսելու ֆրանսիացոց այս սո-վորութեան մասին աւելի մանրամասն կերպով: Բաւական է ասեալ, որ միայն, որ այդ սովորութիւնը արդէն աղդել է բօմանի վրայ այս մրտ-քով, որ նա, կարծես, գրում է նախադիտումով, որ նորանից անպատ-

ճառ կարելի լինի դրամա դուրս բերել: Չէ թէ ախար ամեն բոմանից դրամա չի կարող դուրս գալ: Իսկ միւս կողմից, բոմանից վերցրած դրամա չի մէջ խխտ նկատելի է լինում, որ լետերից բոման է կանգնած, աչնպէս որ բոմանը ալդ դէպքում ծառայում է որպէս լրացուցիչ բան դրամալի համար: Ինչ մուծը կէտեր որ դրաման է ներկայացնում, նոցա բոմանն է պարզում:

Աւելին այս անգամ թողնում եմ Փրանսիացոց ալդ սովորութեան մասին խօսելու: Բայց միթէ ալդքանովն էլ բաւական չէ ակնարկւած, որ, քան ի որ հաշկական նոր գրականութիւնը չի արտագրում դրամատուրգներ, բայց արտագրում է վիպասաններ, որ, ասում եմ, մեր բնական ընկերտուարի ինքնուրոյն դրամաներով հարըստացներ են սպասում եմ վէպերից:—Հաշկական բեմի վերածնունդն են սպասում եմ վիպական դրականութիւնից: Նւ ալթմ էլ արդէն մեր նորագոյն դրականութիւնը դորա համար նիւթ է տալիս: Բոմանից դրամա չիւողը կարող է և չը լինել ինքը վիպասանը և, մինչև անգամ, սովորաբար ուրիշն է լինում, բեմին աւելի ծանօթը, բնական հեղինակի արժանաւորութիւն ունեցողը:

Բայց սա մի միջանկեալ էր և անցնենք Օնէին: Որպէս շատ ուրիշները, նոյնպէս և Օնէն, իւր դրամաներից առաջ, գրեց բոմաններ: «Սերժ Պանինը», դրամալից առաջ, դուրս եկաւ բոմանի ձևով: Արժանաւորութեան մասին առ ալթմ շատանանք ասել, որ նա պսակւեց Փրանսիական Ակադեմիալից: Բայց բոմանի մէջ արդէն զգացւում էր, որ աչնոնդ կալ մանաւանդ դրամա, մի արդէն պատրաստի դրամա, և որ բաւական էր բոմանում իշխող տեսարանները մի քիչ դէսից, մի քիչ դէնից կտրատել, որ ալդ բոմանը բեմի վրալ դնէի: Նւ ալդ գործն է, որ Օնէն փալլուն և լաջողակ կերպով կատարեց:

Եւ խօ ասացի, թէ Օնէի դրաման ծնւեց բոմանից: Բայց բնորոշը սա է, որ Օնէն կարծես առաջ գրում է դրաման, նորանից բոման չիւում և ներկայացնում հասարակութեան և լետոյ հրատարակում դրաման, իբր թէ բոմանից դուրս բերած, աչն աստիճանի տեսարանները թւում են իբր ծագած մի բուն դրամալական գաղափարից: Կարդալով ինքը բոմանը, միայք է ծագում, թէ էջերը՝ նւիրած նկարագրութեան, պէլլաթին, հոգեբանական անալիզին—լետոյ աւելցրած լինին, որպէս զի դրամալին բոմանի կերպարանք տրւի:

«Գարընոցի պետը» նմանապէս քաղած է նոյն անունով բոմանից: Նւ ալտնոյ, որպէս «Սերժ Պանինը» համար ասւեց, կարծես հեղինակի գաղափարը ներկայացած լինի առաջ դրամալի ձևով և որ բոմանը ոչ ալ ինչ է, եթէ ոչ պիւնսի զարգացումը: Ալդ կարևոր է աչն պատճառով, որ բոմանից ծնւած մի պիւնսի սովորական պակասութիւնները չեն երևում «Գարընոցի պետը» մէջ:

Ժօրժ Օնէլէն ցալժմ զբաղեցրած թեմաներն են եղած՝ կռիւը ծաղումով արիստոկրատիայի և փողի արիստոկրատիայի մէջ. մի կռիւ կամ մրցումն, որը սաստկանում է և կենտրոնանում ամուսնութեան մէջ. Ալդէ «Սերժ Պանինի» գրածքը:

«Դարձնոցի պետի» սխեմաը նոյն տեսակ է. աղնիւ աշխատաւորը հարստացած՝ խեղդում է ծնունդով աղնականին, որ փչացած է:

Ահա գործողութեան գլխաւոր գծերը: Մարկիզուհի Բօլիօ ունի մի աղջիկ՝ Կլարա անունով և մի քեռորդի՝ դուքս զը Բլիւնի. Կլարան և զը Բլիւնի երիտասարդները պէտք է պսակէին. բայց մի վատ վարած դարանական գործ մարկիզուհուն զրկում է իւր բոլոր կարողութիւնից, իսկ միւս կողմից՝ դուքս զը Բլիւնին իւր բոլոր կարողութիւնը խօսել-պրծել է: Դուքսը, որի պատիւը անգամ արատաւորած է, համաձայնում է ամուսնանալ օրիորդ Աթենայիս Մուլինէի հետ, որը մի հարուստ արհեստագործի աղջիկ է: Ալդ լուրը իմանալուն պէս, Կլարան չի կարողանում զսպել ոչ իւր արհամարհանքը և ոչ իւր վիշտը. թէ մէկը և թէ միւսը նորան վնասել են տալիս փոքր ինչ արագ կերպով մի ուրիշ պարտիպլին համաձայնել: Հանքագործարանի մի գլխաւոր, Ֆիլիպ Դերբլէ, վաղուց կրում է իւր մէջ մի կրքոտ հիացումն երիտասարդ Կլարայի համար, և նա է, որ պիտի պսակւի ալդ աղջկաւ հետ. Կլարան ինքն է դուքսին ներկայացնում Դերբլէին, որպէս իւր փեսացու:

Պսակը կատարւում է, բայց Կլարան իւր ուժերի վրայ չափազանց էր չղտնի դրած. տեսնելով իրան միայնակ Դերբլէի հետ, ամուսնական ննջարանի շէմքին, նա ցուց է տալիս սրտի անձկութիւն և հակառակութիւն. Ֆիլիպը (Դերբլէն), որ մինչ ալդ ժամանակ ալքքան բարի էր, բռնւում է խանդոտութիւնով. նա ենթադրում է, թէ իւր կինը դեռ ևս ավստում է և գուցէ սիրում իւր առաջին փեսացուին՝ դուքս զը Բլիւնին: Կլարան նորան չի պատասխանում՝ ոչ, հէնց իսկ այն պատճառով, որ չօս ունի դորանով խոս տալ ամուսնութեան առաջին հետեանքներից, կամ գոնէ ալդ քետաձգել: Կլարան չաջողում է ալդ բանում իւր սպասածից աւելի, և Ֆիլիպը ինքն է արտասանում իւր բաժանելու վճիռը. «Նրբ դուք մի օր կը հասկանաք ձեր անարդարութեան ամբողջ ծաւալը, թէկուզ էլ չօքէք առաջիս ներողութիւն խնդրելու, ես այն չը պիտի տամ»:

Կլարան և Ֆիլիպը (Դերբլէն) սակալն իրար սիրում են, և ալդ սէրը դնալով աճում է, նա մանաւանդ, որ նոքա իրար բաժանող խոչընդոտը իրանց սեպհական ձեռքերով հեռացրին: Բայց նոցա մէջ կալ արժանապատուութեան խնդիր, վերջապէս, եթէ ուղէք, հպարտութեան խնդիր. Դերբլէն իրանց ցուց է տալիս իբր թէ մտերմանում է զը Բլիւնիի կին Աթենայիսի հետ, մի բան, որ անտանելի է թւում Կլարային: Դա նոյն ալն Աթենայիսը չէ, որ խլից իւր առաջին փեսացուին, իսկ հիմա սպառնում է խլել իւր ամուսնուն, այն ամուսնուն, Դերբլէին, որի վեհանձնութիւնը դէպի իրան, Կլարան, սրի

պէս սորա խիղճը խալթում է. արն Դերբէլին, որի պատուականութիւնը, որպէս մարդու, ճանաչում է աւելի ու աւելի, և փալլում դուքսի բարոյական ոչնչութեան առջև։ Կլարան սաստիկ խանդոտութիւնից բռնւած, իւր սեպհական տանը, հրաւէրքի ժամանակ, խալտառակում է Աթենալիսին։ Դերբէլն Աթենալիսի սպասածին հակառակ, վաւերացնում է իւր կնոջ արարքը։ Մենամարտը զը Բլիւնիի և Դերբէլի մէջ դառնում է անխուսափելի։ Բայց Կլարան չի համբերում տանը, վազում է մենամարտութեան տեղը և զը Բլիւնիի գնդակը, որ Դերբէլին պիտի դիպէր, իւր վրայ է առնում։ Կլարան մեռնում է, բայց արդէն ընդունելով իւր մարդուց՝ Դերբէլից սորա սիրով խոստովանութիւնը։

Այս կարճ անալիզը միմիայն անկատար գաղափար է տալիս դրամայի մասին, որը լիքն է նրբութիւնով, շխտականեան զգացումներով, խանդակաթ և խորը սիրով։

Ահա այս դրաման է, որ իւր վրայ էր բռնած առել Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը հայկական բեմի վրայ դնել սիրողների ձեռքով։ Ֆիլիպ Դերբէլի դերը կատարեց պ. Վահան Մամիկոնեան, Կլարայի դերը՝ օրիորդ Նազարէզեան, Նա կատարեցին ճոքա իրանց պատասխանատու դերերը՝ մէկը հմտութեամբ, միւսը՝ վճռականութեամբ, արժանի ամեն խրախուսանքի։ Ուշադրութեան արժանի է, որ օրիորդ Նազարէզեանը, որը գրեթէ ամբողջ ժամանակ բեմի վրայ էր, առաջին անգամ բեմի վրայ ոտք էր դնում. և այդ հանգամանքները, չ'երևաց, թէ ազդում լինէին նորա վրայ. նա իմացաւ իրան իշխել, որ մի մեծ պայման է մանաւանդ մի նոր սկսողի համար, արն էլ մի աղապիսի դերի մէջ։ Մի խօսքով, օրիորդ Նազարէզեանը, որպէս կ'ասէր Փրանսիացին, ձեռք բերեց դրամական ճատիւրալիզացիայի վկայաթուղթը (acquis ses lettres de naturalisation dramatique)։

Միւս խաղացողները գրեթէ ամենքը խաղացին հասկանալով իրանց դերերը և, պ. Մամիկոնեանի հետ, Թիֆլիսի սիրողների ներկայացումների չաջողութեան գրաւականներն են կազմում՝ տիկին Սեանգուլեան (մարկիզուհու դերում), տիկին Աթանդիլեան (Աթենալիսի դերում), տիկին Քալանթարեան, օրիորդ Սապարեան, պ. պ. Ալլահվերդեան, Մանդինեան Ամիրան, Ղ. Տիգրանեան և արն։

Սիրողների այս անգամաւ ներկայացումը իմ առջև բացեց երկու հօրիզօն՝ մէկը մեր թատրոնական գրականութեան համար, միւսը՝ մեր բեմի համար։ Նա արդէն վերը ասացի, թէ ինչ օգուտ պէտք է քաղի հայկական թատրոնը հայկական վիպական գրականութիւնից։ Ուրեմն, կրկնողութեան մէջ չ'ընկնելու համար, ուղղակի բացատրեմ իմ միտքը բեմի նկատմամբ։

Սա մի գաղտնիք է, չը բացատրւած ոչ ոքից, բայց և արնպէս ճմար-

տուժիւն է, ակնկալոնի ամենքին, և ամենքից խոստովանած, որ կողկասեան հալերը չեն արտադրում դրամական տաղանդներ: Տաղանդի պակասութիւն: Ով գիտէ, եթէ ճակատագրին, ֆատալիզմին չը հաւատալու համար բաւականաչափ հիմքեր ունինք, ցեղակին լատկութիւնների մասին շատ ենք լսել, շատ էլ կարողացել և շատ էլ դիտել սեպական աչքերով: Ուրեմն անկարելի է, որ մեզ, կողկասի հալերիս ընդհանրապէս, բնութիւնը օժտած չը լինի դրամական լատկութիւններով և կամ, եթէ ուզէք, մեր աշխարհի բարք ու վարքը, մեր կուլտուրը չի նպաստում դրամական զգացումների զարգացման: Այդ ինչպէս պատահեց, որ ահա 30 տարի է, որ հպկական թատրոնը գոլութիւն ունի և մենք՝ կողկասցիքս, չ'ունեցանք, չեմ ասում հանճարեղ, բայց գոնէ մի քանի արտակարգ դրամական արտիստներ և արտիստուհիներ. Օհ, մանաւանդ արտիստուհիներ, որոնց նկատմամբ կատարեալ սով է մեղանում: Եւ միթէ պատահական երեւոյթ է, որ մեր ամենակատարեալ դերասանը մի Աղամեան է, որը Պօլսեցի է, միթէ պատահական երեւոյթներ են Գարաքաշեաններ, Հրաչեաներ, Սիրանուշներ, Մնակեաններ, որոնց նմանները կողկասը ցաւով չը կարողացաւ արտադրել: Ոչ, պատահական չէ ալլ երեւոյթը: Արտիստական շնորհքից ընդհանրապէս դուրկ ենք մենք, ինչպէս երեսում է:

Բայց դպրոցը, վարժութիւնը, կրթութիւնը կարող են մինչ մի լատնի աստիճան զարգացնել մեր մէջ դրամական ճաշակը: Եւ ես կարծում եմ, որ ալն կարևոր շնորհքները, որ պէտք է մի դեռ ևս մեծ աշխարհք չը տեսած հալ դերասանուհի ձեռք բերի, մտնի ու ընտելանալ թատրոնական աշխարհի հետ, — ալլ դպրոցի մէջ սնուում է իւրաքանչիւրը, որը ընտելանում է եւրոպական գաղափարներին և ապրում եւրոպական կեանքով՝ ալն կեանքով, որի ծնունդ է ներկալ եւրոպական դրաման: Նա, որը իւր նիստ ու կացով, իւր ընկերական լարաբերութիւններով, իւր ուսումով և կարգացած գրքերով շրջում է եւրոպական մթնոլորտում, նա արդէն նախապատրաստում է եւրոպական դրաման լաւ հասկանալու, նա արդէն անցնում է ալն կեանքի շկուան, որը վեր է քան բոլոր կրթական դպրոցները: Մի հատ օրինակ բաւական է միտքս պարզելու համար: Խօսեմքին լատնի է, թէ ինչ լատկութիւն է կնոջ մէջ ալն, ինչ ֆրանսիացիին անւանում է grâce, ալսինքն շնորհալիութիւն: Դա հոգու լատկութիւն է, որը երևում է և մանդալու և խօսելու բոլոր հանգամանքների մէջ: Բայց մինչև որ մեր ազգի կեանքը չի պահանջում իւր կանանցից շնորհալիութիւնը ալն չափով, որքան, օրինակ, ֆրանսիական կեանքն է պահանջում, ինչպէս սպասենք, որ մեր սովորական չլիաններից ծնւած մի կին-դերասանուհի բնաւ լիալց տալ շնորհալիութեան բոլոր նրբութիւնները: Չէ թէ ալն բոլոր ձևերը, որոնցով արտապոլում է շնորհալիութիւնը, պէտք է շինծու չ'երևան, ալլ երևան որպէս բնական, որպէս լատով՝ խաղացող դերասանուհու բնատրութեան: Գանդատում ենք, թէ մշտական բնւ չ'ունինք, գանդատում

ենք, թէ դերասանութիւնը չ'ունինք: Ո՞րտեղից սոքա պէտք է ծնւին, քանի որ մեր հալիական կեանքում ալն բոլոր լատկութիւնները, որոնք կարելի են դերասանութեան, մենք հաւածում ենք և կամ գոնէ նոցա չենք մշակում:

Դորա համար հարկաւոր չէ անպատճառ բարձր սակոնական կեանք, բաւական է, եթէ կանացի նուրը լատկութիւնները ժողովրդի աչքում լարզան և ընտանեկան կրթութիւնով զարգանան. բաւական է, որ բնական լատկութիւնները ընտանեկան և հասարակական կեանքի մէջ հէնց սկզբում չը խեղդեն նախապաշարունակների ազդեցութեան ներքոյ:

Այդպէս է արդեօք մեղանում: Ունի արդեօք մեր հասարակ ժողովուրդը կարգին գաղափարներ կանանց կրթութեան վրայ: Ոչ, ոչ, հազար անգամ ոչ: Եւ խնդիրը արժէ, որ մի փոքր կանգ առնենք: Բայց մի մոռացէք, որ իմ խօսքը կանանց կրթութեան մասին չէ առհասարակ, այլ որքան որ այդ կրթութիւնը կապ ունի բնմի պահանջների հետ:

Մի մեծ թիւրիմացութիւն է տիրում բնմի նկատմամբ ոչ միայն ժողովրդի ամենաստորին խաւերում, այլ նոյն իսկ միջին դասակարգի մէջ: Հալիական ընտանիքը միմիայն մի բան է ճիշդ ընդունում աղջիկների կրթութեան գործում. այդ ալն է, որ աղջիկը պէտք է լինի ամօթխած, լինի նա անուսում, թէ ուսում առած:

Բայց ալն, որտեղից սկսում է տարբերութիւնը գոհնիկի և լուսաւորածի հալացքների մէջ, այդ ալն է, որ հասարակ հալը, կնոջ ամօթխածութիւնը պաշտպանելու նպատակով, կնոջ համար ստեղծել է կեանքի պալմաններ, որոնցմէջ խեղդում են կնոջ բնական բոլոր միւս լատկութիւնները, մինչդեռ լուսաւորածը աշխատում է, զարգացնելով կնոջ մէջ սորա բոլոր լատկութիւնները՝ ամօթխածութիւնը կամ աբուռը ձեռքից չը թողնել: Մէկը՝ գոհնիկը, տղէտը վախենում է կնոջ ազատ շրջելուց, մի գուցէ գալթակղզի, մոլորի: Լուսաւորածը մտածում է ալ կերպ. թող կինը վալելի աղատութիւն, միայն թէ նորա ոգուն և մտքին ալն ուղղութիւնը տամ, որ նա իւր աղատութիւնից չար գործադրութիւն չ'անէ: Ուրեմն մէկը, գոհնիկը, ստիպած է իրակ պահել կնոջ, և ալն ժամանակ կրթութիւնը նորա աչքին աւելորդ բան է երևում, միւսը, լուսաւորածը, կրթութեան դեկը իւր ձեռքին պահելով, չի վախենում կնոջ աղատութիւնից: Ներկան էլ հաւասարապէս պաշտպանում են կնոջ ամօթխածութիւնը, բայց մէկը՝ գոհնիկը, տղէտը՝ վախկոտ է, միւսը, լուսաւորածը, կրթածը՝ քաջ է և արի, նա չի վախենում զարգացումից, առանց որի առաջընթացութիւն առած բանը չի կարող կատարել:

Հալացքների և հանգամանքների ալն տարբերութիւնը ունեցել է ալս հետևանքը, որ հալ կինը չի կարողացել երևան դուրս բերել իւր բոլոր լատկութիւնները, որոնք և մնացել են փակած, խեղդած: Այդ ներգործել է հալ կնոջ և՛ հագուստի և՛ ճաշակի վրայ, և՛ քաղաքների և՛ խօսելու ձևերի վրայ, մի խօսքով նորա արտաքինի վրայ և, ի հարկէ, ոչ ի

նպաստ, այլ ի մնաս: Դրաման, պսիխոլոգիական, հոգեբանական դրաման, մանաւանդ անպիսին, որի նիւթը առնւած է կնոջ ազատ շարժողութիւնը թուլատրող կեանքից, չափազանց մեծ դժւարութիւններով կարող է գտնել իւր թարգմանները մեր հայկական հասարակ կարգի ընտանիքների մէջ առնած կանանց մէջ:

Ահա այդ մտածումներն են, որ ինձ տեղիք են տալիս Թիֆլիսի սիրողների ներկայացումներին մի առանձին նշանակութիւն տալ: Այստեղ ես տեսնում եմ խմբւած հալ կանայք, որոնց տաղանդի մասին ես ոչինչ խօսելու չ'ունիմ, բաց որոնք մի մեծ արժանաւորութիւն ունին ցայժմ տեսնւած կովկասի «դերասանուհիներին» վրա: Այդ ան է, որ «սիրողներին» խմբին մասնակցողները իրանց ընտանեկան կրթութիւնով քիչ թէ շատ տարբերւում են հակակական սովորական նախապաշարումներով խնդրած ընտանիքների կրթութիւնից: Նոքա իրանց հակացքներով և կրթութիւնով աւելի մօտ լինելով եւրոպական կրթութեան, նոքա, այդ սիրողները, բնականապէս իւրացրել են, հակացքների հետ, նաև եւրոպական շարժումները և միտքը ազատ, բաց և բնական կերպով արտայայտելու ընդունակութիւնը: Ի հարկէ, միայն մի վայտնի չափով. բաց այդ չափը արդէն զգալի է: Սեմեր («սիրողներին») ներկայացումները միշտ աւելի հետաքրքրական են, քան մեր մշտական խմբերի ներկայացումները. հաւատացէ՛ք, որ ոչ միայն բարեգործական նպատակների պատճառով, այլ ուղղակի իրանց խաղով:

«Սիրողներին» ներկայացումներին, ուրեմն, ես տալիս եմ աւելի մեծ նշանակութիւն, քան սովորաբար տրւում է նրանց. միմիայն բարեգործական նպատակով փող ժողովելու օրգաններ չեն նոքա, այլ «սիրողներին» ներկայացումները, այլ ապագայ մշտական բեմի պատրաստական զբարոց: Հէնց այդ տեսակէտից է, որ ես ուրախութեամբ կ'ողջունէի սիրողների ներկայացումները, եթէ նոքա կրկնէին անքան չաճախ, որքան հարկաւոր է խմբի գոյութիւնը զգալ տալու համար:

Բաքուի Մարդասիրական Ընկերութիւնը մայիսի 21-ին տօնեց իւր 25-ամեայ ջօբելեանը, իսկ սույն տոնիս ամսի 4-ին, Նրեանի Հայոց Թեմական դպրոցը տօնեց իւր գոյութեան 50-ամեակը: Նրկու քաղաքների հալ բազմաթիւ հասարակութիւնները առիթ են ունենում խմբելու մի միակ մտքի մղումով՝ թէ նոքա գործել են միասին՝ ազգին ծառայելու համար: Նրկուան էլ խմբւում են անցեալի աշխատութիւնները վերալիչելու, իրանց մտքից միաժամանակ անցկացնելու, միաժամանակ զգալու համար ան, ինչ կարող էր արտադրել նոցա գործածներէից լաւագոյնը: Ներկայ 19-րդ դարը մեր կեանքի պատմութեան ան չպօքն է, երբ թմրած, չորացած երակների մէջ կենդանարար արիւնը կրկին սկսում է խաղալ, ուղեղի բթացած թելերը կրկին սկսում են շարժւել և միտք արտադրել:

Նիժէ շատ ազգերի համար մտածելը և առաջադիմելը մի բոլորովին որոշ, բայց նոր ժամանակից է սկսում, մեզ՝ հայերիս համար, նա հին է, որպէս և հալ ազգը հին է, որպէս կուտուրական ազգ:

Բարի վիշատակ Ներսէս V-ին, Մատթէոս I, Գէորգ IV-ին, որոնց հովանաւորութեան ներքոյ աճեց 50-ամեակը լրացրած Երևանի թեմական դպրոցը, հալ կրթութեան սերմնարաններից մէկը. բարի վիշատակ բոլոր նրանց, որոնք իմացել են հասարակութեան և հովապետների լոսերը արդարացնել ալի դպրոցում գործելիս. բարի վիշատակ բոլոր նրանց, որոնք իրանց սրտի լաւագոյն զգացումները գէթ մի րոպէ միացրած են եղած ալի դպրոցի գոյութեան հետ և թողիւնաւիտ եղած, նպաստած՝ լուսադրած նպատակների համար: Մաղթենք, որ և ալսունետե, բայց արդէն աւելի հսկայական քալերով առաջադիմել կարողանալ տօնող դպրոցը. մաղթենք, որ դուրս համար հարկաւոր համերաշխութիւնը ժողովրդի և ազգիս հովապետների մէջ անդրդւելի մնալ, համերաշխութիւն, որը մեր հասարակական գործունէութեան շահաւէտութեան գրաւականն է եղած և մընում է նոյնը ալսոր:

«Մարդասիրական Ընկերութեան» 25-ամեայ լոբելեանի տօնի առիթով, ներկայ համարում ընթերցողը կը կարդալ մեր սեպհական թղթակցից հաղորդած տեղեկութիւնները: Մի բան, սակալն, աչքի է ընկնում: Ես գոնէ բնական կը գտնէի, եթէ Թիֆլիսի Հալոց Բարեգործական Ընկերութիւնը ոչ թէ մի հեռագրով շնորհաւորէր մեր անդրանիկ բարեգործական ընկերութիւնը, ալ շնորհաւորէր նորան լանձին իւր մի պատգամաւորի, որը պէտք է լինէր կամ ընդհանուր ժողովների նախագահը և կամ խորհուրդի նախագահը, բայց աւելի առաջինը, Հանդիսին Ն երկալ գտնւելով, թրեւս Թիֆլիսի հասարակութիւնը իւր վերալ զգար ալն ներգործութիւնը, որը կ'անէր իրանից աւելի գործօն մի ընկերութիւն:

Անցեալ ամսալ կովկասեան շաբաթներից մէկը իրաւամբ պատկանում էր վրաց իշխան Ակակի Յերետելի'ին: Ամենալն իրաւամբ վրացի գրողներից մէկը ասում է, որ «ալն երախտապարտ գնահատումը, որ արաւ Գութալիսի Միքալէլեան կալածական բանկի ընդհանուր ժողովը Յերետելի'ի գրական ծառաութիւնների նկատմամբ, գործեց մեծ և բարեբար ազդեցութիւն ոչ միալն վրացոց, ալ և մեր հասարակութեան բոլոր խաւերի վրալ»: Այո, ոչ միալն վրացոց, ալ մանաւանդ նաև հայերի վրալ, կը վկայում ես: Յատնի է, թէ հրն է իրողութիւնը: Իրողութիւնը սա է, որ չիշեալ բանկի ընդհանուր ժողովը վճռեց տալ վրաց բանաստեղծ իշխան Յերետելի'ին տարեկան 1500 րուրլի հասոլթ ցմահ: Ալի իրողութիւնը, որի հասարակական նշանակութիւնը ամեն ընթերցողին հասկանալի է, և որի վրալ, ուրեմն, ես կանգ չեմ առնում, տեղիք տւեց գրաւանների, որոնցից ես առաջին անգամ ծա-

նօթացալ վրաց բանաստեղծութեան, գրականութեան հետ առհասարակ, իսկ մասնաւորապէս, թէ ի՞նչ տեղ է բռնում աղբ գրականութեան մէջ իշխան Յերետելին: Մենք, հակերս, ամենքս լաւ գիտենք, թէ ո՛րքան մենք անգէտ ենք մեր դրացի աղգի գրականութեան մասին. աղբ ինձ շատ հեշտացնում է պարզ խոստովանութիւններ անել իմ անգիտութեան մասին նոյն առարկայի վերաբերեալ: Ե՛հ, և ի հարկէ, դա մի ոչ շատ պատուաբեր հանգամանք է մեզ համար. բայց որ իմանալու լինենք, թէ ո՛րքան նոքա, վրացիք, անգէտ են մեր նկատմամբ, այն ժամանակ մենք մեր մեղքը շուտով կը մոռանանք: Այդպիսով ես իմ մեղքին ինքս թողութիւն եմ շնորհում, ուրախ լինելով, որ Յերետելի՛ի դէպքը ինձ առիթ տւեց ծանօթանալու մի առարկայի հետ, որը շատ կողմերով հետաքրքրական է ընդհանրութեան համար: Եւ անձ թէ ինչ է ասում հեղինակաւոր՝ վրացիներից մէկը՝ պ. Նիկողաձէն, որի գրածքի մասին առհասարակ իմ կարծիքը կը լպտնւմ չետոյ: Աւ ալժամ ես քաղում եմ միայն այն, ինչ վրաց գրականութեան է վերաբերում և, մասնաւորապէս, իշխան Յերետելի՛ն:

« Սկսել նորանից, ասում է նա, որ իշխան Ակ. Յերետելին, բառիս բուն նշանակութեամբ, իսկական բանաստեղծ է. աղբ դեռ քիչ է. նա միակ բանաստեղծն է վերջին կէս դարի վրաց ոտանաւոր գրողների մէջ: Ես աղբ ասում եմ այն մտքով, որ նոցա մէջ միայն նորան ընտելւածը օգտուէ չատուկ ընդունակութիւններով, որ մարդուց բանաստեղծ են շինում: Նորանից դուրս աղբ հազար գլուխ բարեմասնութիւնները, վերջին ժամանակաւ բոլոր վրաց ոտանաւոր գրողների մէջ (իսկ նոցա անունն է լէզէօն), պարզատուած էին և այն էլ մի քիչ ժլատութեամբ, գուցէ միայն իշխան Գ. Կօչակիձէ՛ին (Չաւաղիտէլի անունով լպտնի), որը մի առժամանակ փալկեց վրաց գրականութեան մէջ 60-ական թւականների վերջում և որը թառամեց հասունութիւնից շատ առաջ: Միմիայն իշխան Յերետելին է կանգնած մի ուրիշ, 40-ական թւականների նմանապէս նշանաւոր արժանաւոր վրաց բանաստեղծի հետ մի շարքում, իշխան Նիկ. Բարատաշիլիի հետ. և աղբ երկու գրողները ներկայացնում են լիովին ներկայ դարի Վրաստանի ամբողջ բանաստեղծութիւնը: Միայն նոքա մտքիւն աղբ բանաստեղծութեան մէջ կենդանի, անմահ պատկերներ, թեթևութեան և ձևերի անկեղծութեան հետ միասին. և միմիայն նոցա ստեղծագործութիւնները, որ արդէն մտած են ժողովրդի փշողութեան և ճանաչողութեան մէջ, կը թողնեն անջնջելի հետք, որ բաժինն է միայն բնատուր բանաստեղծական շնորհքի: Իշխան Յերետելի՛ի գրական ընդունակութեան ուժը բոլորովին ապշեցուցիչ է... Նա մեղանից անհամեմատ աւելի շատ ունի ալս անգնահատելի արժանիքը, որ և գրողի ծայրագոյն ուժն է՝ թափանցել ընթերցողների մէջ կարծես էլէքորական հոսանքով, մի և նոյնն է, թէ ինչից էլ նա լսօսի: Նա ցնցում է, արթնացնում է, ուրքի է կանգնեցնում մինչև անգամ կաթածահարին, թողնելով առ

միշտ անջնջելի հետք ոչ միայն իւր գաղափարով, այլ և նորա արտապատկերով ձևով—և մինչև անգամ ձևով աւելի, քան գաղափարով: Մի խօսքով, բոլորը ինչ կարող էր տալ էն իսկ վրացական առատ բնութիւնը, ոչ չափ, ոչ սահման չը ճանաչելով մի գրողի՝ նա աւած է իշխ. Ակակի Զերետելիին, արն չափսերով, որոնց մասին իրաւունք չ'ունի երազել ոչ մէկը կովկասեան գրողներէց: (Ասինք թէ պ. Նիկողաձէն աւտողը նոյն վրացական առատ բնութեան մղումին է հետևում, որը ոչ չափ, ոչ սահման է ճանաչել, ուղիւով իւր բանաստեղծի դիրքը որոշել արն կովկասեան գրողներէ չարքում, որոնց նա նոյնքան է ճանաչում, որքան, օրինակ, հայերը՝ Զերետելիին):

«Օժտած արդքան հազագիւտ գրական տաղանդով, իշխ. Զերետելին գրական ասպարէզ եկաւ իւր պատանեկական հասակում, 1857 թ., դեռ ևս գիմնադիւարի աթոռի վրայ նստած: Վրաց գրականութեան մէջ, գրականապէս ոչնչի հետ չի կարելի համեմատել նորա առաջին իսկ ոտանաւորի տպաւորութիւնը: Ռուսաց գրականութեան մէջ նա նման էր Պուշկինի երկրասարդ մուսալի տպաւորութեանը: Ամենքը, գիտնականներ և տգէտներ, իսկոյն հասկացան, որ համեստ Յ ստորագրութեամբ ոտանաւորների մէջ հնչում է «ոտանաւորի ներդաշնակութիւնը», արն իսկ ներդաշնակութիւնը, որի «աստուածալին խորհուրդները», ըստ ասելոյն Մալկովի, ի զուրկը լինէր որոնել իմաստունների մատեանների մէջ: Այդ ոտանաւորների լեզուն իսկոյն երևան էր գալիս մինչ արն ժամանակ անչալտ ժողովրդական բարբառի հրապուրով և թեթևութիւնով, առանց ամենաչնչին խառնուրդի գրքական արևոտականութեան և պալմանաւորութեան: Առհասարակ առաջինից մինչ վերջին օրը իւր գրական գործունէութեան, իշխ. Զերետելին պահպանեց նոյն դիրքը վրաց գրականութեան մէջ, ինչ Պուշկինը ունի ռուսաց գրականութեան մէջ՝ վերաբերեալ գրածների լեզուին և ձևին: Նա առաջինն էր, իսկ վետոյ աւելի քան մի ուրիշը իւր հայրենակիցներից, որ ուժեղ կերպով մօտեցրեց գրականութեան լեզուն ժողովրդականին, տալով նորան անհաւատալի ձկունութիւն և շնորհալիութիւն, արտապատկերութիւն և գոյն»: Բայց վրաց գրողը շտապում է չափնել, որ Պուշկինի հետ համեմատութիւնը միայն ձևին և լեզուին վերաբերեալ է թոյլ տալիս, որովհետև՝ աւանդ, վրաց բանաստեղծին չը լաշողեց համեմատել ռուս բանաստեղծի հետ և առաջ բերել արմատական վեղաշրջում իւր հայրենիքի գրական արտագրութիւնների ոչ միայն ձևի, այլ և բովանդակութեան մէջ:

«Այդ բարձր պատիւը՝ տալ հայրենի ժողովրդի գրական ուժերին նոր և արժանի խնդիրներ—եղաւ բաժին վրաց գրականութեան մէջ ոչ թէ իշխան Ակակի Զերետելիին, որին արդ ամենից շատ կը սաղէր, այլ մի ուրիշ գրողի՝ իշխան Իլիա Չաւչաւաձէին, որը և արդ իսկ պատճառով, իրաւամբ բռնեց առաջին տեղը, որպէս գլուխ ներկայ գրականութեան:

Բանից դուրս է գալիս, ըստ Նիկողաձէի, որ իշխան Չաւչաւաձէն Յերետելի'ի բնական տաղանդի հատկին էլ չ'ունի, բայց, չը նալած դորան, Չաւչաւաձէն է գլուխ վրաց գրականութեան և ոչ Յերետելին, որովհետև Չաւչաւաձէն է, որ տեց ուղղութիւն իւր հայրենիքի նորադուն գրականութեան: Մէկը, Չաւչաւաձէն, բնութիւնից համեմատաբար աւելի քիչ օժտւած, առանց դադարելու ճիգ թափեց, զոնց իւր թուր ժամանակը, որ իւր ընդունակութիւններին տալ ալն բոլոր զարգացումը, բոլոր կարողութիւնը, որքան միայն նրանց մատչելի էին: Ունենալով կամք, հաստատամտութիւն, ունենալով իւր կեանքում նպատակներ, նա չը վախեցաւ աշխատելուց՝ սորա բոլոր ծանրութիւնով և անհրապուրանքով հանդերձ: Նա ուսանում էր, կարդում էր ուրիշ գրողներին, ուսանում էր կեանքի խնդիրները.— և զարգացրեց իւր խելքը մինչ իւր ժամանակի լուսաւորած մարդկանց ընդհանուր մակերևութը...: Եւ նա չաջողեց ամեն բանում, չաջողեց ալն պատճառով, որ, իւր հայրենակիցների մէջ, նա թերևս միակ գործիչն էր կամքով, հաստատամտութիւնով, աշխատասիրութիւնով: Եւ նոյն իսկ բանաստեղծութեան մէջ, այդ քրտնաջան աշխատութիւնով ձեռք բերած կարողութիւնով, թողեց իւր հետքը, ի մեծ օգուտ ժամանակակիցների և լետագաների համար:

«Իսկ միւսը, իշխան Յերետելին, որը ծնւած է իսկական բանաստեղծ, աւաղ, իւր վերաջ ոչինչ ուժ գործ չը դրեց, իւր անզուգական բանաստեղծական տաղանդը չը զինեց բոլոր անհրաժեշտ պայմաններով և միայ իւր մերկ բնութեան սկզբնական պարզութեան մէջ: Նա զմայլեցնում է, երբ նորա երգը հնչում է, զմայլեցնում է, որպէս աննման սոխակ. բայց հենց այդքան: Նորա երգը չի մեռնելու և չի մոռացւելու. օ՜հ, այդ ճիշդ է, որպէս Աստուած սուրբ է: Բայց նա չը բռնեց վրաց գրականութեան մէջ ալն գերիշխող տեղը, որը պատկանում է նրան ծնունդով: Մօլլ ծառակ, նա թաղեց հողի տակ Աստուածանից նրան տւած ուժեղ գործիքը, և իւր ազգի գրականութիւնը չը քաղեց նորա գործունէութիւնից բոլորը, ինչ կարող էր տալ նորան այդ ահագին տաղանդը, «ինքն իրան աւերող և թշնամի»:

Ահա՛ այսքանը իշխան Յերետելի'ի մասին մասնաւորապէս, վրաց գրականութեան մասին ընդհանրապէս, որքանով որ դորա մասին պ. Նիկողաձէն ձեռնհաս է դատելու: Ես իմ կողմից ընդունում եմ, որ նորա դատողութիւնը գոնէ մի արժանաւորութիւն ունի, որ նա հասկացնում է ինչ ուղում է ասել: Իսկ այդ արդէն մեծ արժանիք է: Բայց ես մի փոքր անհաւատ եմ դառնում, երբ, ի միջի ալլոց, պ. Նիկողաձէն չարտարարում է ի լուր ամբողջ Ռուսաստանի աջօպիսի մի հալեացք. լսեցէ՛ք. «Կարելի է առանց որ և է չափադանցութեան ասել, որ բնական տաղանդով նա, իշխան Յերետելին, ամբողջ գլխով բարձր է բոլոր Կովկասեան գրողներից, բանաստեղծներից և արձակ գրողներից, առանց որ և է

բացառութեան: Դէ՛, ասացէք խնդրեմ, ի սէր Յիսուսի և Սուրբ Գթութեան, ապրել Ռաֆայէլ Պատկանեանի, Բաֆֆիի և Պռօշեանի ժամանակներում և սոցա, որպէս և շատ ուրիշներին չը ճանաչելով, առանց ցերեմոնիայի ալը ձևով խօսեց, — վիրաւորանք է՛ կրիտիկոսի պատւին:

«Մուրճ»-ի ընթերցողները անշուշտ զարմացած կը լինին ալն սառն վերաբերմունքի վերաջ, որ ամսագրիս խմբագրութիւնը ցոյց տուց իւր դէմ գրոտողներին: Խմբագրութիւնը բազմաթիւ գրաւոր փաստեր ունի, որ ալը զարմանքը հիացմունքի է հասել շատ և շատ շրջաններում և ալն էլ ամենուրեք: Բայց խնդիրը ալը չէ: «Մուրճ»-ի մասին կարծիք չալտողներինց եղաւ նաև հէքիաթաբան և մանկական գրականութեան մէջ հաստատ տեղ բռնած և ամենքից էլ, որպէս ալըպիսին գնահատած, պ. Աղապեանը, որը, զժողո՛ իւր ալը պատաւար դիրքից, զօրով ուղում է կրիտիկոս դառնալ, զոհնով զորա համար նոյն իսկ իւր սեպհական կաշին: Նոյն ալն քննադատութեան մէջ, որի ամենավիթ խարի մասը հենց նորա լառաջաբանն էր, պ. Աղապեանցը խօսեց նաև պ. Գէորգ Բարխուդարեանցի «Բարեպաշտ Մարգիկ» պօէմի մասին, որից, որպէս վիշում են «Մուրճ»-ի ընթերցողները, մի նմուշ տալեց ամսագրիս առաջին համարում: Պ. Աղապեանցը ալը պօէմը պարկապղուկ անւանեց — ամենքին զարմացնելու համար, որպէս չատուկ է բոլոր «վիթխարի» մարդկանց: Ա՛ժմ պ. Բարխուդարեանցը, հրատարակելով իւր պօէմը ամբողջապէս, գործը վերջացնում է մի վերջաբանով, որով լուծում է մի պսիխօֆիզիքական խնդիր, ալն է, թէ՛ ի՞նչ զանազանութիւն կա՞ հոգու և մտքի մեծութեան և մարմնի մեծութեան մէջ: Եւ անհ թէ ինչ է ասում երգիծաբանը.

«Վերջացնելով իմ առակը,

Պէտք է խնդրեմ ներողութիւն,

Թէ պատճառեց ալս տետրակը,

Իմ ընթերցող, քեզ ձանձրութիւն.

...

Եթէ ես էլ գործ ածէի

Հալո խորէնի «Յանգարանը»,

Անպիսի բան կը ստեղծէի,

Որ զարդարէր թանգարանը.

Ես երգում եմ, իբրև գուսան,

Ինչ որ աղղում է մուսան.

Դորա համար գուցէ երգըս

Հնչում իբրև պարկապղուկ

Մի աղաւիճ, որին երկըս

Հաճելի չէ, որին թողկ
 Երևում են բոլոր մարդիկ.
 Միայն ի՜նքն է մեծ, ի՜նքն է հանճար.
 Նրան համոզել զուր կ'աշխատիք,
 Թէ նա մեծ չէ, ալլ միայն երկար:

Ուրեմն խնդիրը պարզում է նորանով, որ մեծ պէտք է ասել խելքով և հոգով մեծին, բայց մարմնով մեծին պէտք է ասել երկար: Որոշումը սրամիտ է: Բայց միայն մի պայմանով, որ սատիրը դորանով իւր վերջին խօսքը ասած լինէր, առանց հարկաւորութիւն դրալու դիմել օգնութեան Եզոպոսեան կատակներին:

ԼՈՒՍԻՆԻ

ԲԱՔՈՒԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Սորանից ճիշդ 25 տարի առաջ, Բաքուի հալ հասարակութեանը տիրում էր նույն ուրախութիւնը, նույն ոգևորութիւնը, ինչ ամսուս 21-ին, միայն այն ղանադանութեամբ, որ նոցա շարժառիթները տարբեր էին: Այն ժամանակաւ ոգևորութեան պատճառը այն պայծառ աստղն էր, որ երեսց Բաքուի հօրիզոնի վերայ և հրաւիրեց մտածող հային լուսաւորութիւն և մարդասիրութիւն տարածել իրանց համազգիներին մէջ: Այդ աստղը ալժմեան Մարդասիրական Ընկերութիւնն է, որի կանոնադրութիւնը նախկին փոխարքայ Նորին Կալսերական մեծութիւն իշխան Միխայէլը բարեհաճեց հաստատել մայիսի 21-ին, 1864 թ.: Ո՞վ էր այն մարդը, այն ուժը, որը ալնպիսի լուսաւոր ժամանակ, ինչպիսին էր վաթսուհական թւականը, բայց մի ալնպիսի քնտ ընկած դաւառական քաղաքում, ինչպէս էր Բաքուն, որը իրաւամբ կոչւում է եղել Կովկասի Սիբիր, ոգևորած մարդասիրական գաղափարով, երևան է գալիս խաւար ամբոխի մէջ մարդասիրութիւն և լուսաւորութիւն տարածելու: Դա՛ հանգուցեալ բժիշկ Դաւիթ Ռոստոմեանցն էր: Այդ հազաւգիւտ մարդու մասին շատ քիչ տեղեկութիւններ կան. ինչ որ էլ նորա մասին պիտի ասեմ, այդ քաղում եմ Ընկերութեան քարտուղար պ. Ա. Գալստեանցի տեղեկագրից: Յանկալի կը լինէր, որ նոքա, որոնք բաղդ են ունեցել նորա հետ ընկեր, բարեկամ կամ պաշտօնակից լինելու, շտապէին նորա մանկական, ուսանողական և բժշկական կեանքից տեղեկութիւններ հաղորդել Ընկերութեան քարտուղարին, որը տպագրութեան համար պատրաստում է ընդարձակ տեղեկագիր, որի մէջ անշուշտ կը մտնի և հանգուցեալ հիմնադրի կենսագրութիւնը:

Հանգուցեալ բժիշկ Դաւիթ Ռոստոմեանցը ծնւել է Թիֆլիսում, 1820 թ. և վախճանւել է 1869 թ., ուրեմն 49 տարեկան հասակում: Նա իւր